



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ դասվար
Թեմա՝ Նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը
տարրական դպրոցում

Կատարող՝ Գալստյան Աննա Գրիշայի

Ղեկավար՝ Գյուլամհրյան Զուլիետա Հարությունի, մ. գ. դ. պրոֆեսոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3-4
1. ՇԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՈՒՐՋ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ.....	5-9
2. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ.....	10-13
3. ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ	14-20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	21-22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքը մարդու մտավոր գործունեության ձև է, մտածողության դրսևորումը լեզվի միջոցների գործածմամբ: [7]

Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացում ասելով՝ ենթադրվում է բառապաշարի հարստացում, կապակցված խոսքի զարգացում. տարբեր տեսակի տեքստեր կառուցելու կարողության ձևավորում:

Մայրենիի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների խոսքի զարգացումը կարևոր խնդիր է: Տրամաբանորեն ճիշտ կառուցված, հիմնավորումներով և դիպուկ բառերով ու քերականական կանոններին համապատասխան խոսք կառուցելու աշակերտի կարողությունը նրա մտավոր զարգացման մակարդակի ցուցանիշն է:

Կապակցված խոսք կառուցելու կարողության ուղղությամբ դպրոցականների հաջողություններն ապահովում են և մեծապես նպաստում կարդալու լիարժեք կարողության և ուղղագրական գրագիտության հիմքի ձևավորմանը: Այսինքն, կապակցված խոսքի զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովում է ընդհանրապես բարձր մակարդակի ուսումնական գործունեություն:

Կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորման գործընթացի արդյունավետությունը մասնավորապես պայմանավորված է նրա ստեղծագործական բնույթով. որքան շատ ստեղծագործական աշխատանք կատարվի դասի ժամանակ, այնքան գործընթացը հետաքրքիր կլինի և արդյունավետ:

Ստեղծագործական աշխատանքի տեսակներից է շարադրությունը, որը կրտսեր դպրոցում հատուկ տեղ է գրավում. դրա հետ է կապված տարբեր տեսակի տեքստեր կառուցելու աշակերտների կարողության ձևավորումը, և դրա հիման վրա են իրականացվում մյուս բոլոր խոսքային վարժությունները:

Խոսքի բոլոր տեսակներով հյուսած շարադրություններ գրելու գործընթացը նաև դաստիարակության արդյունավետ միջոց է, այն գրգռում է երեխաների զգացմունքները, նրանց սովորեցնում է մտածել և գնահատել տեսածը, լսածը, ապրածը, զարգացնում է դիտունակությունը, աշակերտից պահանջում է ինքնուրույնություն, ակտիվություն, հրապուրվածություն, խոսքի մեջ սեփականը, ինքնուրույնը ներդնելու ձգտում, նպաստում է անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Մանուկների համար շարադրություն գրելը ստեղծագործական բարդ աշխատանք է, որի ժամանակ աշակերտը դրսևորում է իր անհատական հակումները, հետաքրքրությունները, ճաշակը, ազատություն է տալիս իր երևակայությանը: Կրտսեր դպրոցականները սիրում են

շարադրություններ գրել: Նրանք հատկապես առանց դժվարության են գրում պատմողական շարադրություններ: Սկսած երկրորդ դասարանից՝ աշակերտները սիրով են գրում նաև նկարագրական շարադրություններ, որովհետև դրանք ծանոթ առարկաների մասին են և տալիս են ստեղծագործական հնարավորություն:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ հիմնավորվում է նրանով, որ այսօր նվազել է երեխաների հետաքրքրությունը գեղարվեստական խոսքի նկատմամբ: Այդ հետաքրքրությունն ու ընթերցանությունը նախկինում դրականորեն էին ազդում սովորողների խոսքի զարգացման մակարդակի բարձրացման վրա: Համացանցն ու բջջային կարճ հաղորդագրությունները բացասաբար են ազդում դպրոցականների խոսքի վրա ընդհանրապես, ոճի վրա՝ մասնավորապես: Սկսած մանկական տարիներից՝ փոքրիկները դժվարանում են կառուցել պատմողական, դատողական, մասնավորապես՝ նկարագրական խոսք: Արդյունքում՝ նրանք դառնում են չհաղորդակցվող, չհասկացվող: Այսպիսով, ծագում է նշված դժվարությունները հաղթահարելուն միտված ծրագրային պահանջների ու անձի զարգացման խնդիրների միջև գոյություն ունեցող հակասությունները լուծելու անհրաժեշտություն:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝ հիմնավորել նկարագրական շարադրության հնարավորությունները՝ որպես կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման հիմնական միջոցներից մեկը:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ. մշակել և փորձարկել նկարագրական շարադրություն հյուսելու աշակերտների կարողության ձևավորման մեթոդական շղթա:

1. ՇԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՈՒՋ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Շարադրությունը կապակցված բնագրի՝ տեքստի տեսակ է: Այն տարրական դպրոցում կարևոր տեղ է գրավում. բոլոր տեսակի փոխադրությունները ենթարկվում են նրա խոսքային կանոններին: Հենց շարադրություն գրելիս (նկատի ունենք ողջ ընթացքը) է աշակերտն առավելագույն չափով ընդգրկվում խոսքային գործունեության բնական պայմանների մեջ:

Սկսած առաջին դասարանի նախալրջանական շրջանից՝ ոչ մեծ պատումների տեսքով, պայծառ և զգացմունքային պատմություններով (բանավոր) փոքրիկ դպրոցականն աստիճանաբար անցնում է լուրջ, ծրագրավորված աշխատանքի՝ շարադրություն գրելու փորձերի: Թե՛ բանավոր, թե՛ գրավոր շարադրություններ հյուսելու գործընթացում զարգանում են աշակերտների ինտելեկտը, զգացմունքները, ապրածը, զգացածն իմաստավորելու և գնահատելու կարողությունը, դիտողունակությունը, համեմատելու, հակադրելու, եզրակացություններ և դատողություններ անելու ունակությունները: Ինքնուրույն խոսք կառուցելիս աշակերտը գործնականորեն կիրառում է խոսքի քերականական ձևերը: Թե՛ բանավոր, թե՛ գրավոր շարադրություններն օգնում են, որ երեխաները խորությամբ գիտակցեն և արտահայտեն իրենց զգացմունքները և համոզմունքները: Շարադրություն գրելու գործընթացը զարգացնում է աշակերտների պատասխանատվությունը, առավել սերտ է դարձնում մայրենի լեզվի և գրականության համակարգերը. սովորողները հանգում են այն գիտակցության, որ գրականության մեջ արտացոլվում են մեր լեզվի օրինաչափությունները, իսկ գրականությունը կյանքն է:

Շարադրություն գրելու ունակությունը որևէ տեսակի տեքստ կառուցելու կարողությունն է: «Տեքստ կառուցելու կարողություն» արտահայտության տակ նկատի են առնվում որոշակի համալիր ունակությունները, որոնց առկայության դեպքում միայն վստահորեն կարելի է ասել, որ սովորողի գրավոր խոսքը զարգացած է կամ գտնվում է զարգացման որոշակի մակարդակի վրա: Կարողությունների այս համալիրի մեջ մտնում են.

- որոշել սեփական մտահղացմամբ շարադրած տեքստի հիմնական միտքը (ի՞նչ են ուզում ասել, ո՞րն է իմ կազմած տեքստի գաղափարը),
- ընտրել վերնագիրը կամ առաջարկված վերնագրերից հարմարն առանձնացնել,
- կազմել տեքստի նախագիծը (պլանը),

- որոշել և համակարգել բառամթերքը,
- կառուցել, «ձևավորել» սկիզբը և վերջը (ավարտը),
- որոշել մտքերի ճիշտ և որոշակիորեն տրամաբանված հաջորդականությունը»: [3,

էջ 330]

Մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են շարադրության տեսակներ գրելու կարողության ձևավորման մի շարք սկզբունքներ՝ հիմք ընդունելով ոչ միայն շարադրման ոճը, այլև՝ բովանդակությունը, կառուցվածքը:

Ձ. Գյուլամիրյանը նշում է շարադրության մի շարք տեսակներ: Նա դրանք բաժանում է՝

- ըստ նյութի հավաքման սկզբնաղբյուրի.

ա) ապրածի, տեսածի, լսածի հիման վրա,

բ) ընթերցած նյութի, դիտած նկարի, կինոնկարի, ներկայացման, էքսկուրսիայի, ցերեկույթի տպավորության հիման վրա,

գ) տարբեր աղբյուրներից ձեռք բերած տեղեկատվության հիման վրա,

- ըստ կազմակերպման ձևի՝ **խմբային և անհատական:**

- ըստ խոսքի տեսակի՝ **պատմողական, նկարագրական, դատողական և**

համակցված:

- ըստ ոճական առանձնահատկությունների՝ $\frac{1}{2}$ ՝³ՕՍձՕՅՆՅՈՇՅ, **İ»ñ**³ñ³ՍՇՅ “ ·**áñ**Í³·

İ³Յ: [1, էջ 331]

Ժամանակագրային հերթագայության իմաստով՝ շարադրության շուրջ տարվող աշխատանքի առաջին քայլը թեմայի ընտրությունն է: Թեման, ըստ էության, շարադրության առարկան է, այն, ինչի մասին պիտի խոսվի: Թեմայով է որոշվում այն նյութերի, փաստերի, երևույթների, հատկանիշների ընտրությունը, որոնց շուրջ պիտի կառուցվի շարադրությունը: Թեման, որպես կանոն, պայմանավորված է շարադրության գաղափարով: Գաղափարը շարադրությունը գրողի միտքն է, մտահղացումը, որը նա արտահայտում է գեղարվեստորեն:

Թեման, որպես կանոն, առավել ընդգրկուն է, ծավալուն: Աշակերտներին հաղորդվող թեման եթե ընդարձակ է, ծավալուն, ապա նրանք կարող են «մոլորվել» թեմայի մեջ, չկողմնորոշվել: Այդ պատճառով մեթոդիստներից շատերի [2, 4, 6, 8] կարծիքով կարիք չկա աշակերտներին ներկայացնել շարադրության թեման: Այն պիտի բացահայտվի, որպեսզի աշակերտները շարադրություն գրելիս դուրս չգան թեմայի շրջանակներից և նյութը շարադրեն թեմային համապատասխան: Այդ աշխատանքը պիտի իրականացվի շարադրության նախապատրաստական փուլում՝ գործնական ճանապարհով.

անհրաժեշտ է շարադրության նյութերի հավաքումից գնալ դեպի թեմայի էությունը, կամ հակառակը՝ թեմայի շուրջ խոսակցությունից գնալ դեպի նյութերի հավաքումը: Ընդ որում՝ առաջին դեպքում ուսուցիչն իրականացնում է բավականին ընդարձակ նախապատրաստական աշխատանք. սովորեցնում է դիտել, նյութեր, փաստեր հավաքել, դրանք համադրել, համեմատել, հակադրել, ընդհանրացնել, եզրահանգումներ կատարել: Այդպիսի նախապատրաստական աշխատանքի անհրաժեշտություն է առաջանում սովորաբար էքսկուրսիաներից, զբոսանքներից, բնության ծրագրավորված դիտումներից, տեսածի, զգացածի, ապրածի շուրջ գրվող շարադրությունների դեպքում:

Երկրորդ դեպքում աշակերտներին ներկայացվում է թեման, մշակվում է աշխատանքի պլանը, հավաքում են անհրաժեշտ նյութերը, դրանցից ընտրվում կարևորները, համակցվում են, մշակվում, և նոր շարադրվում է տեքստը:

Այսպիսով, շարադրություն գրելու աշխատանքի առաջին պայմանը ընտրված թեմայի ըմբռնումն է ու բացահայտումը:

Չաջորդ կարևոր քայլը շարադրության վերնագրի ընտրությունն է, որը կատարում է ուսուցիչը: Շարադրության վերնագիրը պիտի բավականին որոշակի լինի, կարևորը՝ հուշող, թե ինչի մասին պիտի գրվի: Եթե թեման շարադրության առարկան է, ապա վերնագիրը մանրամասնում է, հստակեցնում օբյեկտը: Մեկ թեմայի մեջ կարող են մտնել բազմաթիվ թեմաներ: [2, էջ 16]

Եթե ընտրված է շարադրության վերնագիրը, անհրաժեշտ է հաջորդաբար իրականացնել.

ա) նյութերի հավաքում՝ դիտումների, էքսկուրսիաների, զբոսանքների, նկարների, կինոնկարների, ներկայացումների դիտումների ընթացքում, ընթերցած դասանյութերի և արտադասարանային ընթերցանության, դրանցից ստացած տպավորությունների վերհիշումից և այլն,

բ) հավաքված նյութերի համակարգում, էական արժեք ունեցող դեպքերի, փաստերի առանձնացում, դիտարկում,

գ) շարադրությունը կազմող մտքերի հաջորդականության որոշում,

դ) նախագծի (պլանի) կազմում,

ե) բառապաշարի նախապատրաստում, ուղղագրության տեսակետից բարդություն ներկայացնող բառերի քննարկում, հենակետային բառախմբի ձևավորում: [1, էջ 331]

Շարադրություն գրելուն նախապատրաստող հաջորդ քայլը պլանի կամ նախագծի կազմումն է:

Պլանի կազմումը պարտադիր պայման է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր շարադրությունների դեպքում: Հայոց լեզվի մեթոդիկայի բուհական դասագրքում նշվում է պլանի չորս տեսակ.

- ա) պատմողական նախադասություններով,
- բ) հարցական նախադասություններով,
- գ) անդեն նախադասություններով,
- ե) խառը տիպի նախադասություններով:

Շահեկան է 3-5 կետից կազմված պլանը: Սովորաբար պլանն անհրաժեշտ է կազմել շարադրությունը գրելուց անմիջապես առաջ: Խորհուրդ է տրվում նաև այն կազմել նախապատրաստական փուլում՝ պայմանով, որ պլանը հետագայում լրամշակվի, կատարելագործվի: Այս դեպքում շարադրության նախապատրաստման փուլը (նյութերի հավաքում) հաջորդում է պլանի կազմմանը: Օրինակ, եթե շարադրությունը պիտի գրվի էքսկուրսիայի հիման վրա, նախապես անհրաժեշտ է աշակերտներին առաջարկել պլանը՝ նախագիծը, որպեսզի էքսկուրսիան ընթանա պլանավորված, նպատակային:

Նյութերի հավաքումը շարադրության նախապատրաստման հիմնական բաժինն է: Մի շարք մեթոդիստներ նշում են նյութերի հավաքման երկու աղբյուր և կուտակման երկու տեսակ.

ա) ընդհանուր զարգացմանը նպաստող, ընդարձակ շրջանակի վերաբերյալ նյութերի հավաքում,

բ) նյութերի որոշակիորեն նպատակադրված հավաքում՝ որոշակի վերնագրով շարադրություն (ելույթ, հաղորդում) գրելու համար:

Առաջին տարբերակը, բնականաբար, անընդհատ, մշտական գործունեություն է, որը նյութերի հավաքման համար ենթադրում է առանձին թղթապանակ:

Նյութերի հավաքման երկրորդ տարբերակը կազմակերպվում է հստակորեն սահմանափակված ժամկետում, ուսուցչի կողմից շարադրության թեմայի որոշումից հետո: Նախատեսված շարադրության համար նյութը պիտի «կուտակվի» ոչ միայն աշակերտների հիշողության մեջ, այլև պիտի գրառվի համապատասխան աշխատանքային տետրում, կազմվի անհրաժեշտ բառերի բառարան, ընտրվեն հենակետային (բանալի) բառեր: Ենթադրվում է, որ նյութերի հավաքմանը տրամադրած ժամանակն ավելին է, քան մնացած աշխատանքինը:

Նյութի հավաքմանը և դասակարգմանը զուգահեռ՝ ընտրվում է այն հիմնականը, որը պարտադիր պիտի գործածվի շարադրության մեջ: Միաժամանակ այդ ընթացքում իրականացվում է լեզվական աշխատանք. բառերի ուղղագրության ճշտում,

բառակապակցությունների և նախադասությունների կազմում, տեքստի կարևոր հատվածների ձևակերպում, որոշ մտքերի նախնական գրառում (սևագրություն):

Բնականաբար, շարադրության նախապատրաստական փուլը կարող է ունենալ բազմաթիվ տարբերակներ, ընդհանուր ձևաչափից շեղումներ, քանի որ շարադրության շուրջ տարվող աշխատանքի բոլոր փուլերն էլ, քիչ ավել, քիչ պակաս, ստեղծագործական բնույթ ունեն: Այդ ընթացքում դրսևորվում են յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը, հետաքրքրությունները, ընդունակություններն ու օժտվածությունը:

Խմբային շարադրության անցկացման գործընթացի մեթոդական շղթան.

ա) Շարադրության վերնագրի հաղորդում, դրա քննարկում աշակերտների հետ.

բ) Նախօրոք հավաքած «նյութերի» քննարկում, դեպքերի, պատմությունների վերհիշում, դիտարկում, բանաստեղծությունների անգիր արտասանություն, երգերի ունկնդրում կամ կատարում.

գ) Հարցաշարի կազմում, հենակետային բառերի որոշում.

դ) Ըստ հարցաշարի բանավոր շարադրում (բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությամբ).

ե) Բառային աշխատանք (ուղղագրական և իմաստային արժեքների դիտարկում).

զ) Շարադրության գրառում.

է) Ինքնաստուգում.

ը) Գրավորների հանձնում: [1, էջ 333]

2. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՄԻՋՈՑ

Խոսքի զարգացման գործընթացում կարևոր է աշակերտների դիտողականությունը: Դիտողականությունն ընկած է ճանաչողական հետաքրքրությունների բավարարման հիմքում: Բանավոր պատմումները և գրավոր շարադրությունները նույնպես հենվում են դիտումների վրա, դասակարգում են և ընդհանրացնում տպավորությունները: Սրանք էլ հենց նկարագրական շարադրություններն են:

Նկարագրական շարադրությունների նախապատրաստվելիս դպրոցականները սովորում են բացահայտել դիտարկվող առարկաների հատկանիշները, առանձնացնում են էականը, համադրում են: Նկարագրությունը դպրոցականներին սովորեցնում է սեփական մտքերն արտահայտելու համար ընտրել դիպուկ բառեր, դրանք ճշտությամբ դասավորել, ձևավորում է գիտելիքները խոսքային հստակ ձևակերպումներով արտահայտելու կարողություն:

Կրտսեր դպրոցում հատկապես մեծ տեղ է տրվում երեխաների սեփական դիտումների հիման վրա իրականացվող նկարագրություններին: Այդ ճանապարհով հյուսվող շարադրությունները կրթական նպատակներից բացի՝ արժեքավոր են նրանով, որ երեխաներին սովորեցնում են դիտումներ կատարել, օգտվել դրանց արդյունքներից, ամփոփել դրանք, եզրակացությունների հանգել: Սրանք բարձրակարգ մտածողության տանող այն աստիճանական քայլերն են, որոնք չափազանց կարևոր են:

Նկարագրությունները լինում են «գործնական» և «կերպարային»: Կրտսեր դպրոցում կիրառվում են նկարագրության հետևյալ տեսակները.

1. Առարկայի նկարագրությունն անմիջական դիտման արդյունքում («Խնձոր», «Տիկնիկս») կամ անցյալում կատարած դիտումների հիման վրա.«Խնձորենին գարնանն ու աշնանը». այս վերնագրով շարադրությունն ունի լրացուցիչ, քիչ ավելի բարդ խնդիր՝ համեմատության տարրեր:
2. Աշխատանքային գործընթացի նկարագրություն. «Ինչպես պատրաստեցինք թռչնի բույնը», «Ինչպես ծառ տնկեցինք» և այլն:
3. Բնության տեսակների և այլ, ավելի բարդ առարկաների, երևույթների նկարագրություն. «Մեր փողոցը գարնանը», «Խաղալիքների խանութում», «Մեր բակի լողավազանը» և այլն:

Դիտումների հիման վրա աշակերտների հյուսած շարադրությունները սովորաբար ծավալուն են լինում, որովհետև այդ դեպքում նրանք ունենում են շատ նյութեր, և դրանց շարադրման ճիշտ հաջորդականությունը, նկարագրման ընդարձակությունն ապահովվում են նախապատրաստական աշխատանքով:

Կրտսեր դպրոցականների համար առավել բարդ են բնության նկարագրությունները: Դրանք ավելի ծավալուն նյութ հավաքելու անհրաժեշտություն են պահանջում, քան առանձին առարկաների կամ գործընթացների նկարագրությունները: Այսպես, օրինակ, այգին նկարագրելիս աշակերտները նկարագրում են ծառերն ու թփերը, նշում են խնձորենիների տեսակները, հիշում են թռչուններին, այգում մարդկանց կատարած աշխատանքի մասին: Այսպիսի շարադրությունների մեջ աշակերտները սովորաբար դժվարություններ և բացթողումներ են ունենում: Դրանք կանխելու համար անհրաժեշտ է զգալի աշխատանք տանել նախ և առաջ դիտումների ճիշտ կազմակերպման շուրջ, ինչպես նաև աշակերտներին օգնել առանձին նկարագրություններ հյուսել, որոնք կդառնան նմուշ օրինակ: Նախապատրաստական այդպիսի վարժությունների դեր կարող են կատարել պարզ առարկաների դիտումներն ու դրանց հիման վրա նկարագրական փոքրածավալ խոսք կառուցելը, իսկ բանավոր նկարագրություններն ուսուցչին կօգնեն անհրաժեշտ բառեր ընտրելու, դրանց շուրջ մտապահման աշխատանքներ կատարելու հարցում:

Նկարագրական շարադրության պլանը կարելի է կազմել ինչպես նկարագրությունն սկսելուց առաջ, այնպես էլ հետո: Նկարագրության քայլերի հաջորդականությունն աշակերտների հետ քննարկվում է նախապատրաստական զրույցի ժամանակ. առարկաների դիտում, զրույց այն հաջորդականությամբ, որին համապատասխան հետագայում պիտի կազմվի պլանը:

Նկարագրական շարադրությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն համեմատությունները:

Համեմատությունը սովորաբար կատարվում է **նման, պես, ինչպես, հանց, ոնց որ, զերթ** և նման այլ բառերի օգնությամբ. կրտսեր դպրոցականներն ավելի շատ համեմատությունները կազմում են **նման** և **պես** բառերի միջոցով:

Շարադրություն գրելու աշխատանքային ընթացքի օրինակելի հաջորդականությունը

1. Նախապատրաստություն շարադրությանը.

1.1 Նյութի հավաքում և դիտարկվող առարկայի վերաբերյալ աշակերտների պատկերացումների ու գիտելիքների դրսևորում ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ

դասերից դուրս (օրինակ, կենդանի և անկենդան բնության մեջ կատարվող փոփոխությունների ամենօրյա դիտումներ և այլն):

1.2 Ձեռք բերած տեղեկությունների համակարգում (ընդհանուր գրույցներ դիտումների վերաբերյալ):

1.3 Շարադրության թեմայի որոշում, վերնագրի ձևակերպում:

1.4 Շարադրության կառուցվածքի որոշում, հակիրճ պլանի կազմում (կամ պատրաստի պլանի հիման վրա շարադրության կառուցվածքի որոշում):

1.5 Շարադրության բնագրի խոսքային ձևակերպումների շուրջ աշխատանք, ըստ պլանի շարադրության առանձին հատվածների ձևակերպում:

2. Տեքստի բանավոր պատմում:

3. Շարադրության գրառում:

4. Գրածի կատարելագործում, կոլեկտիվ աշխատանք աշակերտների թույլ տված սխալների ուղղությամբ: [5]

Ընդհանրապես, աշակերտը կարել է շարադրություն գրել միայն այն դեպքում, երբ իր համար անհրաժեշտ յուրաքանչյուր բառ կհայտնվի բառապաշարում՝ որպես մի պատրաստի քար, որի համար շենքի պատի մեջ նախապես տեղ է պատրաստված:

3. ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ

Ներկայացնենք, թե ինչպես ենք մենք տարբեր բնույթի տեքստ ներկայացնող շարադրություններ գրելու կարողության ձևավորման ճանապարհով զարգացնում կրտսեր դպրոցականների խոսքային կարողությունները:

Փորձարարական դասի թեման է «Մեր տանն ապրող կենդանին»:

Շարադրությանը նախապատրաստվելիս մենք աշակերտներին հանձնարարեցին նկարել իրենց տանն ապրող կենդանուն այնպես, որ ընթերցողը կարողանա առանց դժվարության պատկերացնել այդ կենդանուն, և նկարը բերել դասարան:

Բնականաբար, դասարանի ոչ բոլոր աշակերտների տանը կենդանի կա: Այդ պատճառով դասվարներն այդ աշակերտներին առաջարկեցին նկարել իրենց ծանոթ ընտանիքներում ապրող կենդանիներին: Առաջարկվեց նաև ընկերանալ այն համադասարանցիներին, որոնց տանը կենդանիներ կան և իրականացնել համատեղ աշխատանք:

I դասի ընթացքը

1. Նկարագրական տեքստի առանձնահատկությունների կրկնություն (իմացածի ընդարձակում):

Մենք դիմեցինք երեխաներին.

- Հիմա ես ձեզ համար կկարդամ ընտանի կենդանու մասին անցյալ տարվա երկրորդ դասարանի աշակերտներից մեկի գրած շարադրությունը: Դուք ուշադիր լսեք, թե ինչ տեքստ է, և ասացե՛ք՝ թե ինչու եք այդպես կարծում:

Իմ թութակը

«Ծննդյանս օրը ինձ նվիրեցին մի թութակ: Ես նրան անվանեցի Կեշա: Կեշան ամեն ինչից վախենում էր: Հետո նա ընկերացավ ինձ հետ: Սկզբում նա փոքրիկ էր: Կամաց-կամաց մեծացավ և դարձավ մեծ թութակ: Կեշայի փետուրները տարբեր գույների էին: Նրա փորիկը դեղին էր, թևերը կանաչ էին: Կեշայի մեջքին կանաչ պուտիկներ կային, իսկ ծանկերը կարմիր էին: Կեշան սիրում է մստել սեղանին և իմ ցուցամատի վրա: Նա նաև շատ գեղեցիկ երգում է: Ես և Կեշան իրար շատ ենք սիրում»:

Հարցազրույց լսած տեքստի շուրջ.

- Ինչի՞ մասին իմացաք այս տեքստից:
- Պատկերացրե՛ք այն ընտանի թռչունին, որը նկարագրված է այս բնագրում:

- Այս տեքստը մեզ հետաքրքրող ի՞նչ հարցի է պատասխանում (ինչպիսի՞ն է ընտանի թռչունը):
- Տեքստում գործածված ո՞ր բառերն են մեզ օգնում պատկերացնել, թե ինչպիսին է Կեշա թութակը:
- Այս տեքստը կարո՞ղ ենք նկարագրական անվանել: Ինչո՞ւ: Ի՞նչն է նկարագրվում:
- Իսկ հիմա եկե՛ք կարդանք գրատախտակին գրված այս երկու տեքստերը և որոշենք՝ դրանցից որ մեկն է նկարագրում կենդանուն, որը՝ ոչ:

Մենք բացեցինք գրատախտակի վարագույրը:

Շեկլիկը

«Ես մի կատու ունեմ: Նրա անունը Շեկլիկ է: Ամռանը մենք մեկնել էինք ամառանոց: Մեր առանձնատան բակում Շեկլիկն ամբողջ օրը զբոսնում էր: Մի անգամ նա զբոսանքից ուշ վերադարձավ: Մենք անհանգստացանք և սկսեցինք նրան փնտրել: Հանկարծ նկատեցինք, որ Շեկլիկը թավալվում է խոտերի մեջ: Նա ատամներով բռնել էր մի հսկայական ձուկ: Մենք շատ զարմացանք, որ փոքրիկ փիսիկը բռնել էր այդպիսի մեծ ձկանը: Այժմ մեր Շեկլիկը մեծացել է: Այս ամռանը նա շատ ձկներ էր բռնում»:

Իմ ձկնիկը

«Ես մի սիրունիկ ձուկ ունեմ: Երբ ես ձորս տարեկան էի այն հայրիկս նվիրեց ինձ: Նա ունի նարնջագույն պստիկ պոչիկ: Ձկնիկի աչքերը փոքրիկ են, իսկ մարմինը պուտիկներով է ծածկված: Ակվարիումի մեջ իմ ձկնիկը ճարպկորեն լող է տալիս ու աշխուժորեն շարժում է պոչիկը: Ես շատ հոգատար եմ իմ սիրելի ձկնիկի նկատմամբ»:

Երկու տեքստերն էլ ընթերցեցինք մենք: Այնուհետև դիմեցինք դասարանին.

- Ձեր կարծիքով, այս տեքստերից ո՞ր մեկում է նկարագրվում ձկնիկը: (Երկրորդը)
- Իսկ առաջի՞նը: Չէ՞ որ այն էլ ձկնիկի մասին էր: (Առաջին տեքստում պատմվում էր ձկնիկի գործողությունների մասին:)

II դասի ընթացքը

2. Ուսումնական խնդրի ներկայացում:

Մենք բացատրեցինք, որ այսօր իրենք պիտի սովորեն նկարագրել ընտանի կենդանիներին: Այդ նպատակով պահանջեցինք սեղանին դնել աշակերտների նկարած նկարները:

3. Շարադրության թեմայի և հիմնական մտքի քննարկում: (Թեման բացահայտելու և շարադրանքի հիմնական միտքը որոշելու կարողության ձևավորում:)

Հարցազրույցի մոտավոր հարցերը.

- Ի՞նչ է նշանակում նկարագրել ընտանի կենդանուն: Ի՞նչ հարցի պիտի պատասխանեք ձեր շարադրանքում: (Ինչպիսի՞ն է տանը պահվող կենդանին:)

- Ուրեմն, ո՞րն է ձեր շարադրության նյութը՝ թեման: Մենք շարադրության ի՞նչը որոշեցինք: (Շարադրության թեման:)

- Իսկ հիմա ուշադիր դիտեք ձեր նկարած նկարները և ասացե՛ք՝ դրանց միջոցով հնարավոր է պատմել, թե ինչպիսին է ձեր ընտրած կենդանին: Յուրաքանչյուրդ դիտե՛ք ձեր նկարածը:

Աշակերտներն իրենց նկարածը դիտելուց հետո սկսեցին ցուցադրել դրանք և պատմել իրենց նկարած կենդանիների մասին: Աշխուժություն մտցնելու համար ուսուցչուհին առաջարկեց փոխանակել նկարները և պատկերացնել նկարների կենդանիներին:

4.Տեքստի կառուցվածքի քննարկում (նկարագրական տեքստ կառուցելու կարողության ձևավորում՝ նկարագրությունները ներկայացնելով հաջորդաբար և փոխշաղկապված):Մեր հարցերի օգնությամբ աշակերտները վերհիշեցին, թե ինչ նախադասությամբ է հարմար սկսել շարադրությունը: Ինչի՞ մասին կարելի է պատմել առաջին մեկ-երկու նախադասությամբ: (Ե՞րբ է տանը հայտնվել կենդանին: Ո՞վ է այն բերել: Ի՞նչ է կենդանու անունը:) Աշակերտները հիշեցին, որ հաջորդը պիտի լինի շարադրության հիմնական մասը:Ուշադիր դիտեք ձեր նկարները և որոշե՛ք, թե ինչ բառեր պիտի գործածեք ձեր տան կենդանուն նկարագրելու համար: Երեխաներն իրենց նկարների ետևում գրեցին այդ բառերը: Մենք դարձյալ հուշեցինք.

- Կարելի է նկարագրել արտաքինը, շարժումները, վարքը: Ցանկալի է պատմել, թե ինչ է նա սիրում, ինչ չի սիրում, որտեղ է քնում, ինչ է ուտում, ինչով է սիրում խաղալ:

Այնուհետև մենք գրատախտակին փակցրեց մի այսպիսի հուշաթերթ.

Իմ կենդանու՝

գույնը

չափերը

ապրելու վայրը

շարժումները

սիրած զբաղմունքը

սիրելի ուտելիքը

մարմնի մասերը՝

գլուխը

պոչը

ականջները

քիթը

թաթերը

Աշակերտները մեկ անգամ ևս հիշեցին իրենց տանն ապրող կենդանիների սովորությունները: Հնչեցին տարբեր ձևակերպումներ:

Այնուհետև մենք բացատրեցինք, թե ինչպես պիտի ավարտել շարադրությունը (արտահայել սեփական վերաբերմունքը):

- Իսկ հիմա կրկին դիտեք ձեր նկարածը: Հնարավոր է ձեր նկարածից որոշել, թե դուք ինչպես եք վերաբերվում ձեր տան կենդանուն:

- Ի՞նչ բառերով է հնարավոր կենդանու նկատմամբ ձեր վերաբերմունքն արտահայտել: («Ես սիրում եմ իմ կատվին, որովհետև...», «Իմ թութակն ինձ դուր է գալիս», «Ես խնամում եմ մեր շնիկին...» և այլն:)

III դասի ընթացքը

1. *Աշխատանք ընդարձակ նախադասություններ կառուցելու, խոսքում ածականներ գործածելու ուղղությամբ:*

- Ուշադիր կարդանք գրատախտակին գրված երկու նկարագրական տեքստերը և փորձենք որոշել, թե ինչով են դրանք իրարից տարբերվում:

- Հիմա փակե՛ք ձեր աչքերը և պատկերացրե՛ք մկնիկին ու փիսիկին:

Մկնիկը

Իմ ծննդյան օրը զարմիկս նվիրեց մի սպիտակ մկնիկ: Առաջին օրերին նա ամեն ինչից վախենում էր: Հետո նա հասկացավ, որ մենք սիրում ենք իրեն: Նա սկսեց խաղալ փոքրիկ կոճով: Մկնիկը շատ էր ուտում: Երբ նա ուտում էր, թուշիկներն ուռչում էին: Ես իմ մկնիկին շատ եմ սիրում:

Փափիկ կատուն

Մի օր մեծ եղբայրս մի փոքրիկ կատու բերեց տուն: Մենք նրան անվանեցինք Փափիկ, որովհետև նա շատ քնքուշ էր ու փափուկ: Փափիկը սպիտակ էր, իսկ մեջքը սև կետեր կային: Նրա թաթիկների վրա վարդագույն բարձիկներ կային: Մեր Փափիկի մոռուքը շատ անուշիկ էր, իսկ աչիկները՝ կանաչ ու բարի: Իմ փիսիկը սիրում է խաղալ գնդակով: Ես շատ եմ սիրում իմ փիսիկին:

- Եկե՛ք մտածենք, մկնիկի՞ն լավ պատկերացրեցինք, թե՞ փիսիկին: (Ինչո՞ւ:) Եկե՛ք մեկ անգամ ևս կարդանք և ընդգծենք այն բառերը, որոնք օգնում են ավելի լավ պատկերացնել մեր կենդանիներին: (Աշակերտներն ուսուցչուհու օգնությամբ ընտրեցին կենդանիներին նկարագրող բառերը (ինչպիսի՞ն է հարցի օգնությամբ), իսկ ուսուցչուհին դրանք ընդգծեց:

- Եկե՛ք տեսնենք, թե որ տեքստում կան շատ ընդգծված բառեր: Հենց այդ բառերն էլ ձեզ օգնեցին ավելի լավ պատկերացնել նկարագրված կենդանիներին: Դրանք առարկայի հատկանիշ ցույց տվող բառեր են: Որքան մեր խոսքում շատ գործածենք այդպիսի բառեր, մեր խոսքն այնքան հարուստ կլինի, նկարագրվող առարկան կամ կենդանին այնքան լավ կպատկերացնենք:

IV դասի ընթացքը

2. *Բանավոր շարադրության կազմում ընտանի կենդանու մասին, բառամթերքի կրկնություն:*

3. *Շարադրության գրառում:*

4. *Ինքնաստուգում:*

Այսպիսով, շարադրություն գրելու ուղղությամբ տարվող աշխատանքներն իրականացվում են հետևյալ ընթացքով.

1. Թեմայի ընտրություն, վերնագրի որոշում:

2. Նախապատրաստական հանձնարարություններ:

3. Նյութերի հավաքում:

4. Բանավոր աշխատանք շարադրության թեմայի շուրջ:

5. Կոլեկտիվ պլանի կազմում:

6. Պլանի ընթերցում, դրա շուրջ կոլեկտիվ քննարկում:

7. Տիպային շարադրությունների մնուշ-օրինակների ընթերցում և քննարկում:

8. Պլանի յուրաքանչյուր կետի պատասխանների քննարկում, անհրաժեշտ բառապաշարի քննարկում:

9. Ըստ պլանի հյուսված կապակցված խոսքի քննարկում:

10. Շարադրության գրառում:

11. Ինքնաստուգում:

Կարևորում ենք նշել, որ նկարագրական շարադրություն գրելու կարողության ձևավորումն իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ փուլ առ փուլ:

Այսպիսով, նկարագրական շարադրության ուսուցման գործընթացում մենք հանդվեցինք, որ շարադրությունը, ինչպես նաև կապակցված խոսքի զարգացման մակարդակը կրտսեր դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետության արտացոլումն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշակերտի խոսքի զարգացումն ընթանում է նրա անձի զարգացմանը զուգահեռ. տարբեր տեսակի շարադրություն գրելու դասերի ժամանակ աշակերտները սովորում են գրագետ շարադրել իրենց մտքերը: Այդ նպաստում է, որ նրանք առաջադիմեն ոչ միայն մայրենիի դասերին, այլև այլ դասերի , ընդհանրապես ողջ կյանքում:

2. Աշակերտների խոսքի զարգացման գործընթացը կառավարելի է և արդյունավետ, եթե այդ ուղղությամբ տարվում է համակարգված աշխատանք: Այդ ընթացքում անհրաժեշտ է, աշակերտներին տալ հաճախ խոսելու, արտահայտվելու հնարավորություն:

3. Ազատ և հաճախակի արտահայտվելու, խոսելու, կարծիք հայտնելու, դասընկերների առջև անկաշկանդ հանդես գալու համար դասարանում պետք է ստեղծել ապահով, վստահելի մթնոլորտ: Միայն այդ դեպքում ուսուցման զարգացնող հնարավորությունը կլինի արդյունավետ:

4. Նկատի ունենալով կրտսեր դպրոցական տարիքի ինքնատիպությունը և տասներկուամյա կրթությամբ պայմանավորված վաղ ուսուցման առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է խոսքի զարգացման աշխատանքների ժամանակ մեծ տեղ տալ զննականության տարբեր միջոցներին և հնարներին, փոխգործուն մեթոդներին և դրանք գործածել արդյունավետ ու տեղին:

5. Շարադրությունների շուրջ տարվող պարբերական համակցված աշխատանքը նպաստում է դպրոցականների բառապաշարի հարստացմանը, բարձրացնում նրանց խոսքի մշակույթի մակարդակը, դաստիարակում է մայրենի լեզվի նկատմամբ գիտակցական վերաբերմունք, զարգացնում ստեղծագործական մտածողությունը, կատարելագործում է բանավոր և գրավոր խոսքը, նպաստում ինքնուրույնության զարգացմանը, ապահովում է կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման բարձր մակարդակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, -Եր., «Զանգակ-97», 2009, -349 էջ:
2. Գյուլամիրյան Ջ.Ջ., Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների ժողովածու, -Եր., «Զանգակ-97», 2009, -183 էջ:
3. Մանուկյան Ա. Խ., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, «Լույս», 1976:
4. Елисеева М.Т. Работа над изложением и сочинением.// Начальная школа. 1991. номер 5, - с.26.
5. Еремеева Ф. П. Развитие речи детей дошкольного и школьного возраста, пособие для учителей.- М, НИИ школ МП РСФСР, 1982, -119с.
6. Ладыженская Т. А. Методика развития речи на уроках русского языка, -М.,1991.
7. Львов М. Р., Горецкий В. Г., Методика преподавания русского языка в начальных классах. Учебное пособие для студентов высших учебных заведений, - М., 2004. -464 с.
8. Нуриллина Н. Н. Как я учу писать детей сочинения//Начальная школа, 1998, номер 3, -80с.